ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Հովհաննես Թլկատինցու անվան № 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի փողոց 1-ին շենք հասցեում, պատմություն (18 դասաժամ), ֆիզկուլտուրայի(20դասաժամ), տեխնոլոգիայի (9 դասաժամ), ինֆորմատիկա (14դասաժամ) և ՆԶՊ-ի ուսուցչի (9 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթներն անցկացվելու են 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատու է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 14^{00}-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա՝ սեպտեմբերի 6-ին, ժամը 12^{00}-ին, Արարատի մարզի Նոր Խարբերդի Հովհաննես Թլկատինցու անվան № 1 միջնակարգ դպրոցում, հասցեն Արարատի մարզ գյուղ Նոր խարբերդ փողոց 5 շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094-667-667: